ԴԻԱԳՈՐՈՍ ՄԻԼՈՍԱՑԻՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՈԷՄԱ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Տեսարան I

Աթէնքի նաւահանգիստը. ծովի վերայ երեւում են նաւեր։

ՆԱՒԱՊԵՏ (*նաւաստիներին*)

Վերջապէս ահա բարձրացաւ քամին.
Մենք կարող էինք հէնց այսօր և եթ
Ճանապարհ ընկնել, բայց մի օր դարձեալ
Մենք դեռ կը սպասենք։
(Հեռուից երեւում է Դիագորոսը՝ զգեստաւորուած)
Իսկ այժմ առէ՛ք
Մի զոյգ սեւ ոչխար և Պոսիդոնի
Տաճարը տարէ՛ք մատաղ անելու։
(Նաւաստիները հեռանում են)

ՆԱՒԱՊԵՏ, ԴԻԱԳՈՐՈՍ

ԴԻԱԳՈՐՈՍ

Ողջո՛յն, Թերամէ՛ն։

ՆԱՒԱՊԵՏ

Դո՞ւ ես, Դիագո՛ր.
Ողջո՛յն, բարեկամ։ Ապոլլոն վրկայ,
Ես քեզ հոգիս հազ ճանաչեցի։

ԴԻԱԳՈՐՈՍ

Դո՛ւ,
Ազնի՛ւ բարեկամ, միակ անձն ես
Այս երկրընքի տակ, որ ինձ կարող է
Հովանաւորել։ Ամբոխի ձեռքից
Հազիւ ազատուած՝ քեզ եմ ես դիմում,
Մանկութեանս անգին իմ բարեկամին։
Ապաստան տուր ինձ քո նաւի վերայ
Եւ թէ սիրում ես քո բարեկամին,
Թո՛ղ գազանի մընայ Դիագորոսի
Անունը։ Ընկե՛ր, ես աղաչում եմ...

ՆԱՒԱՊԵՏ

Ի՞նչ գունատուել ես, ձայնդ դողում է,
Այդ ի՞նչ ես դատել, ի՞նչ է պատահել,
Ասա՛ ինձ տեսնեմ։

ԴԻԱԳՈՐՈՍ

Գեռ. ասա՛ թէ ե՞րբ
Դու պիտի դուրս գաս։

ՆԱՒԱՊԵՏ

Բա՛, ի՞նչպէս, ինձնից
Մածո՞ւկ ես պահում վըշտիդ պատճառը։
Դու պատմի՛ր տեսնեմ թէ ինչո՞ւ այդպէս
Գունատուել ես դու. ինչո՞ւ ես կախել
Դու քո ծընօտից քըրմական մօրուք.
Ինչո՞ւ զառամեալ ծերունու նման
Կորացըրել ես քո ջահիլ մէջքը.

Ինչի՞ համար ես առել քո ձեռքդ
Հովվական երկայն այդ ցուպը, ասա՛։
Թէ բարեկամը դըժուարանում է
Իւր բարեկամին իւր ցաւը յայտնել,
Նա բարեկամ չէ։

ԴԻԱԳՈՐՈՍ

Մի՞թէ իմ մասին
Չես լսել ոչինչ։

ՆԱԻԱՊԵՏ

Ոչի՞նչ։ Այսինքն
Ինչպէս թէ ոչինչ. քո մասին ես շատ
Բաներ եմ լսել. բայց բոլոր լուրերն
Իրար հակասող և ծիծաղաշարժ
Մէկը միւսից։ Խօսում են իբրև
Դու տապալել ես սուրբ արձանները.
Ոմանք պատմում են թէ Պոսիդոնի,
Իսկ միւսները – թէ Հերմէսինը։
Այդ ճի՞շդ է։

ԴԻԱԳՈՐՈՍ

Այո՛։

ՆԱԻԱՊԵՏ

Այո՛. Դիագո՛ր,
Անըզգո՛յշ դու մարդ։ Ա՛խ, քանի՛ անգամ
Ես կըրկնել եմ քեզ. թո՛ղ քո անխորհուրդ,
Անմիտ քարոզները։ Օ՛ ի՛նչ վայրենի
Մի ցանկութիւն է քո սըրտում վառուել—
Խըլել մարդկանցից նոցա հաւատը։
Է՞ր ես խորտակում դու սուրբ արձանները,
Որոնց պաշտում է մեր ժողովուրդը։
Ի՞նչ է քո միտքըդ, ի՞նչ է փափագըդ։

Դարձեալ պընդում եմ, որ առնըւազըն
Անմըտութիւն է, երբ ժողովըրդի
Նըւիրական, սուրբ ըզգացումները
Վիրաւորում են։

ԴԻԱԳՈՐՈՍ

Հաւատա՛, ընկե՛ր,
Ես հաշիւ չ՚ունիմ Ոլիմպեանների
Եւ ոչ մէկի հետ. Զեւսը և Հերան
Եւ Պոսիդոնը և Ապոլլոնը,
Եւ անմահների ամբողջ ժողովը
Թո՛ղ Ոլիմպոսի պայծառ գագաթին
Քաղցրահամ նեկտար շարունակ ըմպեն
Եւ անվիշտ, անհոգ, բարձըր ծիծաղով
Ձայնակցեն մարդկանց հառաչանքներին։
Բայց թըշւառ մարդըն է ողորմելի,
Բարի՛ Թերամէն։ Սարսափելի է
Մարդու վիճակը, միմիայն մարդու։
Անկարող եմ ես համբերել, լըռել,
Երբ որ սա իւր զոյգ աչքերը գոցած
Ըստըրկացած է բընութեան ձեռքին,
Իմ փափագըն էր, որ մարդկութիւնը
Տէր, իշխան դառնար բընութեան վերայ,
Որ սա բարձրանար բընութեան վերայ,
Ինչպէս արծիւը երկնակամարում։
Իմ քարոզըն էր—սընապաշտութեան դէմ;
Իմ քարոզըն էր-լուսաւորութիւն։

ՆԱՒԱԳԵՏ

Դու էլ քարոզի՛ր լուսաւորութիւն,
Բայց սուրբ արձաններն ինչո՞ւ տապալել։

ԴԻԱԳՈՐՈՍ

Ե՞րբ ենք ճանապարհ ընկնում, Թերամէ՛ն։

ՆԱԻԱՊԵՏ

Ո՛չ, ո՛չ, դեռ ասա՛ թէ արձանները...

ԴԻԱԳՈՐՈՍ

Թո՛ղ այդ հարց ու փորձը, ի սէր պաշտելի
Քո աստուածներին։ Գէթ առ ժամանակ
Այդ վէճը թողնենք։ Դու ասա՛ տեսնեմ
Թէ երբ ենք արդեօք ճանապարհ ընկնում։

ՆԱԻԱՊԵՏ

Վա՛ղը։

ԴԻԱԳՈՐՈՍ

Վա՞ղը։ Բայց ինչո՞ւ ոչ այսօր։

ՆԱԻԱՊԵՏ

Չը գիտե՞ս ինչու։

ԴԻԱԳՈՐՈՍ

Չը գիտեմ։ Գուցէ
Բաւականաչափ ճանապարհորդներ
Դեռ չեն հաւաքուել։

ՆԱԻԱՊԵՏ

Ո՛չ. իմ ուղեծից
Դեռ աւելի են։

ԴԻԱԳՈՐՈՍ

Գուցէ խնդրել են,
Որ վաղը եկնես։

ՆԱԻԱՊԵՏ

Նոքա խնդրեցին,
Որ այսօր եկնեմ. բայց անկարող եմ։

ԴԻԱԳՈՐՈՍ

Գուցէ հողմ չը կայ։

ՆԱՒԱՊԵՏ

Ինքըդ լսում ես
Հողմի շընչիւնը, կարծես սուլելով
Նա հրաւիրում է մեզ դէպի ծովը։

ՆԻԱԳՈՐՈՍ

Զարմանալի է։

ՆԱՒԱՊԵՏ

Ո՛չ, մի՛ զարմանալ։
Եթէ մենք այսօր ճանապարհ ընկնենք,
Նաւով կը հասնենք այնպիսի խաղաղ
Մի նաւահանգիստ, ուր ոչ խելօքը
Եւ ոչ յիմարը չեն ուզում հասնել—
Ծովի յատակը, իմ Դիագորո՛ս,
Ծովի յատակը։

ԴԻԱԳՈՐՈՍ

Այդ ե՞րբ Ապոլլոնն
Քեզ տըւեց շընորհ մարգարէութեան։
Ինչո՞ւ ես կարծում..,

ՆԱՒԱՊԵՏ

Դառնագին վորձով
Ես համոզուեցի—այս օրւայ օրը
Զարաբաստիկ է իմ նաւի համար.
Թէ Պարսկաստանի ոսկեայ գահը էլ
Ինձ ընծայ բերես, այսօր իմ նաւը
Տեղից չեմ շարժիլ։

(Հեռւից երևում է մի սիկոֆանտ)

ԴԻԱԳՈՐՈՍ

Այս մարդը անշուշտ
Ինձ է որոնում։

ԾԵՐՈՒԿ

Այո՛, կը ձըգենք...

ՆԱՒԱՊԵՏ

Սակայն թոյլ տըւէ՛ք
Երկու խօսք ասեմ, ճանապարհորդնե՛ր...
Բայց սըսս... լըսո՞ւմ էք, ինչպէս մըռընչում
Է այնտեղ ծովը։ Մենք մօտենում ենք
Այն վըտանգաւոր ահեղ վիմուտքին,
Ուր ալիքները զարնւում են ջըրից
Ցըցուած ժայռերին և կատաղաբար
Գոռում ու հեծում, ինչպէս խոցոտուած
Վիրաւոր հըսկայ։ Քանի՛ցըս անգամ
Նաւերըն այնտեղ մըղւել են, զարնւել
Սուր սուր վիմերին, և ապա կըտոր
Կըտոր են եղել կայմ, թիակ և նաւ։
Ե՛յ, նաւաստինե՛ր, այժըմ դէպի ձախ
Թիավարեցէ՛ք, դէպի ձա՛խ, այդպէ՛ս։
Փոքըր ինչ շեղւել ենք ճանապարհից.
Դեռ շատ հեռու է նաւահանգիստը,
Դեռ շատ վիմուտքներ մենք պիտի անցնենք...
Արդէն տասը և երեք տարի է,
Ճանապարհորդնե՛ր, որ ես անդադար
Երթևեկում եմ այս ծովի վերայ.
Ձեզ պէս յարգելի ես շատ շատերին
Իմ հաւատարիմ այս տոկուն նաւով
Տարել հասցրել եմ մինչև ցամաք,
Եւ քանի՛ անգամ պատահել է ինձ
Մարտընչել անսաստ մըրրիկների հետ.
Բայց դեռ չեմ յիշում, որ փոթորիկը
Այնքան ահռելի դառնար ինձ համար,
Որպէս այս գիշեր։
Համաձայն եմ ես այս պատկառելի
Ալևորի հետ, որ Պոսիդոնը

Ներհակուած է խիստ մեզնից մէկի դէմ.
Բայց եկէ՛ք խըմբով ջերմաջերմ աղօթք
Մատուցանենք մեծ Ոլիմպեաններին։
Դուցէ աղօթքով մեզ հնար լինի
Հաշտեցնել բարի երկնայիններին։
Ցաճախ աղօթքը շիջեցըրել է
Նոցա զայրոյթը, և ալեկոծումն
Անվընաս անցել և հանդարտուել է։

ԾԵՐՈՒԿ

Մենք բոլորըս էլ ջերմ, արտասուագին
Արդէն շատ երկար աղօթում էինք.
Բայց սակայն ունա՛յն. մեր արտասուքից
Այս ալիքները կարծես աւելի
Բարձրացնում էին... Ո՛չ, Պոսիդոնը
Մեզնից պահանջում է մեղանչողին.
Վիճակ ենք ձըգում։

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Վիճակ ձըգեցէ՛ք։
(Վիճակ են ձգում. վիճակը ընկնում է նաւապետին)

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Բա՛, նաւապետի՞ն...

ՆԱՒԱՊԵՏ

Այո՛, արդարև
Ձեր նաւապետին ընկաւ վիճակը։
Դո՛ւ, երկրասասա՞ն և կարո՛ղ մեր Զևս,
Որ այդ բարձունքից ահեղ գոռում ես
Իմ մեղսոտ գլխին, և դո՛ւ, Նո՛տ, էօ՛լ.
Որ շառաչում էք իմ լըսելիքին
Կատաղի ձայնով, և դո՛ւ, Պոսիդո՞ն,
Որ մըռընչիւնով գոռ ալիքները
Գլորում ես իմ այս նաւի վերայ,

Շիջեցրէ՛ք ահեղ ձեր բարկութիւնը.
Եթէ պիղծ լեզուով կամ թէ չար դործով,
Աստուածնե՛ր, ձեր դէմ մեղանչել եմ ես,
Ես իսկոյն և եթ կը քաւեմ ահա
Ծանրը իմ մեղքերն. բայց միայն շուտով
Թո՛ղ խաղաղանան այս կոհակները,
Թո՛ղ լռեն հողմերն, և երկընքիցը
Թո՛ղ շուտով ցրուեն սևացած թխպերն։
Դո՛ւք իմ պատարժան ճանապարհորդներ,
Գընացէ՛ք բարով։ Աստուածները ուր,
Որ դուք յաջողակ անվընաս հասնէք
Նաւահանգիստը։ Իսկ ես... կը մեռնեմ.
Ձեր փրրկութիւնը իմ մահուանից է
Միմիայն կախուած։ Այսպէս է կամքը
Երկնայինների։

1-ին ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Իսկ մեղանից ո՞վ
Կը կառավարէ այս մեր նաւակը։

ՆԱԻԱՊԵՏՆԵՐ

Մե՛նք, մե՛նք կը վարենք։

ՆԱԻԱՊԵՏ

Բարի աստուածներն
Կը կառավարեն. ծով նետուեմ թէ չէ,
Ապրստամբ տարրերն կը հանգստանան,
Կը պարզի երկինքն, և ցոլուն աստղերն
Ցոյց կը տան ձեզ հարթ, անվընաս ուղին։ (Դիագորոսին)
Իմ մօր, իմ կընոջ, իմ զաւակներին
Իմ վերջին բարովը կը տանես ինձնից։
Դէ՛, մընա՛ք բարով։

(Կամենում է իրան նետել ծովը, Դիագորոսը առաջն է ընկնում և պահում)։

ԴԻԱԳՈՐՈՍ

Ո՛չ, դու չե՛ս մեռնիլ.
Խելացա՛ծ, թշշա՛ռ ճանապարհորդներ,
Ինչո՞ւ կուրորէն կամենում էք դուք
Այն մարդուն խեղդել, որ մեր բոլորից
Ամենաշատն է մեղ պիտանի
Այս դրժուար ժամին։ Եթէ սա ինքը
Իւր յօժար կամքով այս ծովը նետել
Իրան ցանկանար, դուք սորան ուժով
Պիտի պահէիք և թախանձանքով
Խընդրէիք սորան, որ ձեղ չը թողներ
Անտէրունչ, լըքեալ այս ծովի վերայ
Այսքան ահռելի փոթորիկ ժամին.
Դուք սորան փըրկիչ պիտի համարէք
Եւ ամուր բռնէք սորա թևերից,
Բայց ոչ թէ խեղճին խեղդամահ անէք։
Ասացէ՛ք, ձեր մէջ ո՞վ է սորանից
Առաւել հրմուա նաւավարութեան
Արհեստում կամ ո՞վ աւելի ճարպիկ.
Ո՞ւմ են աւելի քաջապէս յայտնի
Մեր առաջ ընկած խուչընդոտները—
Ջրրապրոյտներ, սոսկալի յորձանք,
Մրընչող վիմուտք և կամ ձանձաղուտ
Խարուսիկ վայրեր։
Դուք հաւատացիք ձրգած վիճակին,
Բայց այդ վիճակը անխորհուրդ, անմիտ,
Պատահական է։ Ձրգեցէ՛ք նորից,—
Այլ մարդու կ՚ընկնէ։ Մեր նաւապետին
Արդէն մանկութեան հասակից դիտեմ.
Սորա սրրտումը վառ է միշտ եղել
Պատկառանք, երկիւղ դէպի աստուածներ.
Հազիւ թէ նաւը գալիս մրտնում է
Նաւահանգիստը, առաջին խօսքը,
Որ դուրս է ելնում սորա բերանից,

Շնորհակալական ջերմ աղօթքըն է
Մեծ Պոսիդոնին. և ապա իսկոյն
Ըշտապ գընում՝ է Նորա տաճարը
Եւ մատուցանում՝ գերընտիր զոհեր
Ովկիանոսների հրամանատարին։
Ո՛չ, Պոսիդոնը չէ՛ր կարող երբէք
Զայրանալ բարի Նաւապետի դէմ։
Ձեզ պէտք է մի մարդ, որ՝ կըռիւ մըտած
Բընութեան ըմբոստ այս տարրերքի հետ,
Յաղթանակ տանէր, որպէս քաջ, արի
Ձինուորը մարտից։ Ահա այդ մարդը։
Ձեր փըրկութիւնը սորա կեանքի մէջ
Դուք որոնեցէ՛ք, իսկ սորա մահից
Կամ Պոսիդոնից փըրկութիւն չը կայ։

1-ին ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Ի՞նչպէս...

2-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Ի՞նչ ասաց. թէ Պոսիդոնից
Փըրկութի՞ւն չը կայ։ Սա անաստուած է։
Սա այն սըրբապիղծ Դիագորոսի
Աշակերտըն է։ Ճանապարհորդնե՛ր,
Այլ ևըս ո՞ւր ենք մենք հեռու գընում.
Ահա՛ թէ ում դէմ է Պոսիդոնը
Զայրացած. ահա՛ այն ամբարիշտը։
Ծովը նետեցէ՛ք այս անիրաւին։

3-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Բայց մեր վիճակը...

4-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Այո՛, ում ընկաւ
Վիճակը, թո՛ղ նա իրան ջուր նետէ։

1-ԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Թո՛ղ երկուսքն էլ զոհ գընան ծովին։

2-ՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Այո՛, երկուսին էլ ծովը ձգենք։

ԾԵՐՈՒԿ

Բայց ըսպասեցէ՛ք։ Դու ի՞նչ ասացիր.
Թէ Պոսիդոնից փրկութի՞ւն չը կայ։
Ինչպէս տեսնում եմ, դու նոցանից ես,
Որ իրանց կոչում են իմաստասէր,
Որոնք պիզծ սրբում սընուցանում են
Մոլի խորհուրդներ և մեր միամիտ
Պատանիներին ջանում են շեղել
Ճըշմարտութեան հարթ ճանապարհիցը։
Հասարակութեան գայթակղեցուցիչ
Նենգամի՛տ մարդիկ, թոյնի կաթիլնե՛ր,
Վարակիչ ժանտա՛խտ Աթենքի համար։
Անունըդ ասա՛. ես ահա արդէն
Նախարզգում եմ թէ ի՞նչ գարշ հընչիւն
Մենք պիտի լըսենք։

1-ԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Անո՛ւնըդ ասա՛։

ԴԻԱԳՈՐՈՍ

Ուղեկիցնե՛րըս...

2-ՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Անունըդ ասա՛։

ԴԻԱԳՈՐՈՍ

Ճանապարհորդնե՛ր, դուք ի՞նչ էք անում
Արդեօք անունըս. դիցուք կոչում են
Ինձ Կալլիմախոս կամ թէ Գորգիաս...

ԾԵՐՈՒԿ

Ասա դո՛ւ ուրեմն, նաւապե՛տ, ասա՛
Սորա անունը, որովհետև դուք
Դեռ ևըս մանուկ հասակից իրար
Լաւ ճանաչում էք։ Աւելի ևըս
Կասկածելի է թըւում այս մարգը,
Երբ ծածկում է սա իսկական անունը։

ՆԱՒԱՊԵՏ

Կեֆիսոֆոն է սորա անունը.
Այժըմ գո՞հ էք դուք իմ պատասխանից։

ԾԵՐՈՒԿ

Ճանապարհորդնե՛ր, սոքա սըտում՝ են.
Այս երկուսին էլ Ծովը ձըգեցէ՛ք.
Մեր նաւապետին—վիճակի համար,
Սորան—սըրբապիղծ չար լեզուի համար։
Բըռնեցէ՛ք դոցա և Ծովը...

ԲՈԼՈՐԵՌԵԱՆ

Ձըգե՞նք։ (յարձակում են)

ԴԻԱԳՈՐՈՍ

Բայց ըսպասեցէ՛ք, աղաչում եմ ես.
Ինձ վիջոց տըւէ՛ք երկու խօսք ասեմ.
Ես խոստանում եմ յայտնել բոլորը
Ինչ կամենում էք, դեռ աւելի շատ։
Բայց դարձեալ կըրկնում եմ—նաւապետին
Դուք հանգիստ թողէ՛ք։ Մի՞թէ այս կանանց
Ողբըն ու կոծը և մանուկների
Այս աղէկըտուր հառաչանքները
Ձեր բիրտ սըրտերը չե՞ն շարժում բլնաւ։
Թէ խըղճում էք դուք ձեր կանանց և հէգ
Ձեր զաւակներին։ Եթէ ձեր կեանքը
Թանկ է ձեզ համար, ձեր նաւապետին

Կենդանի թողէք, որ միակ, միակ
Ձեր ազատիչը կարող է լինել։
Իսկ ես… կը խեղդուեմ, եթէ անպատճառ
Զոհ էք պահանջում։
Իմացէ՛ք ուրեմն,
Ճանապարհորդնե՛ր. ձեր առջև կանգնած՝
Այժըմ խօսում է նա, որի կեանքը
Մեր Աթենքումը գընահատուած է
Մի տաղանդ ոսկով։ Նա եմ ես, որ նախ
Մատաղ հասակում հաւատում էր ջերմ,
Ինչպէս այժըմ դուք, դիցաբանական
Առասպելներին. բայց երբ զօրացայ
Ես հոգով մըտքով, մարդկային կեանքի
Ճակատամարտում տեսայ հրէշաւոր
Անարդարութիւն, ծընչուած և հեծող
Առաքինութիւն, անպատիժ չարիք
Եւ լըկտի գործեր, — բայց Պոսիդոնի
Կամ թէ «Մեծ Զևսի» ներկայութիւնը
Չը տեսայ կեանքում։ Եւ այնուհետև
Հրապարակներում և փողոցներում
Ես ընկըսեցի քարոզել մարդկանց
Սընապաշտութեան, տըգիտութեան դէմ,
Միակ ցանկութիւն փարելով իմ մէջ,
Որ այսուհետև մարդը բարձրանար
Անցեալի վերայ և, ինչպէս արծիւ
Երկնակամարում, անվախ, աչքարաց
Նայէր աշխարհի, բընութեան վերայ։
Բայց ուղիղ այնպէս, որպէս այս մըրրիկ
Եւ փոթորիկը, վերկացաւ իմ դէմ
Յունական ազգը և՛ իմ քարոզը
Կոչելով մոլի սըրբապղծութիւն,
Իմ գըլխի համար մի տաղանդ ոսկի
Գին նըշանակեց։ Ես որոշեցի
Խոյս տալ անարդար հալածանքներից։

Բայց ազատելով խուժանի ձեռքից
Ցամաքի վերայ, այս ծովի վերայ
Ես հանդիպեցի աւելի ևս
Անողոքելի, կոպիտ զօրութեան,
Եւ այդ բիրտ ոյժը—ձեր պահանջն է,
Որ այս խաւարից հազարապատիկ
Աւելի մութ է և կըրկնապատիկ
Աւելի վայրագ, քան այս հողմերը
Եւ ալիքները։ Ես Դիագորոսն
Եմ Միլոսացին. թո՛ղ Ցունասատանը
Իմ մասին խօսէ թէ այն ամբարիշտ
Դիագորոսը չը գըտաւ հանդիստ
Երկընքի տակը,
Մըշտընջենաւոր նա հանդիստ ընտրեց—
Ծովի յատակը։

(Իրան նետում է ծովը)։

Էջմիածին, 1891 թ. Նոյեմբեր։